# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1300-Ա «04» նոյեմբերի 2024 թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2024 թվականի հունվարի 18-ի N161-Ա որոշման 8-րդ հավելվածը (աղյուսակ 1), ինչպես նաև հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի 25.10.2024թ. N/63153-24 զեկուցագիրը.

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեով Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) մասով բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժին 1 խմբի 1 դասի «1.Սպորտային միջոցառումների կազմակերպում» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված գումարներից, որպես պարգևատրում՝ 2024 թվականի Օլիմպիական խաղերում երկրորդ և երրորդ հորիզոնականները զբաղեցրած թվով 4 մարզիկներին հատկացնել 8.750.000 /ութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ գումար՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի վրա:

3. Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքապետի
2024 թվականի 11.04. -ի
N 1300-Ա կարգադրության

## ՑԱՆԿ
## ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ

| N | ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ՄԱՐԶԻԿ | ԱՆՁՆԱԳԻՐ | ՀԱՇՎԵՀԱՄԱՐ | ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արթուր Դավթյան | Մարզիկ | BA 3587815 | 1570039990579900 | 2.500.000 |
| 2 | Արթուր Ալեքսանյան | Մարզիկ | AS 0640444 | 1570084563500200 | 2.500.000 |
| 3 | Վարազդատ Լալայան | Մարզիկ | AL 0555624 | 1150001208048030 | 2.500.000 |
| 4 | Մալխաս Ամոյան | Մարզիկ | AL 0566226 | 11807048089200 | 1.250.000 |

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

CoSign